

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների  
մասնագիտական կարողությունների և հմտությունների  
զարգացման» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը  
նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Թամարա Աղաջանյան

Մանկապարտեզ՝ «Սիսիանի համայնքի թիվ 2 ՆՈՒՅ» ՀՈԱԿ-ի կից  
Աղիտուկի գործող խումբ

2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Գլուխ 1

Նախակրթարանի մաթեմատիկական գիտելիքները երեխայի մտավոր զարգացման մեջ անմիջականորեն կարևոր դեր են խաղում:

Մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ երեխաները սովորում են՝ վերլուծել, համեմատել, կատարել հաշվարկային գործողություններ, տրամաբանորեն մտածել, տարբերակել երկրաչափական թվերը, կողմնորոշվել տարածության մեջ:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում է հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը:

Մանկապարտեզում ստացած գիտելիքները երեխաները կիրառում են առօրյա կյանքում: Այդ պատճառով էլ մանկավարժի խնդիրն է երեխաների մոտ

հետաքրքրություն առաջացնել կրթական գործունեության նկատմամբ, տալ անհրաժեշտ տարրական մաթեմատիկական գիտելիքներ, երեխաներին տանել ինքնուրույն պատասխաններ և լուծումներ փնտրելու:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման գործընթացում մանկավարժը օգտագործում է ուսուցման տարբեր մեթոդներ՝

- 1.Գործնական
- 2.տեսողական
- 3.բանավոր
- 4.խաղային

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեջ առաջատար դեր է խաղում գործնական մեթոդը: Այս մեթոդի էությունը երեխաների գործնական գործունեության կազմակերպումն է, որն ուղղված է առարկաների կամ դրանց փոխարինողների հետ գործողությունների եղանակների յուրացումը (նկարներ, մոդելներ և այլն) :

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման բոլոր դիդակտիկ խաղերը բաժանված են մի քանի խմբերի՝

- 1.խաղեր թվերի
- 2.խաղեր կողմնորոշման տարածության մեջ
- 3.խաղեր երկրաչափական գործիքների հետ
- 4.տրամաբանական մտածողության խաղեր
- 5.ժամանակի ճանապարհորդության խաղեր

<<Տարրական>> մաթեմատիկական պատկերացումների ձևավորման տեսողական և բանավոր մեթոդները ինքնուրույն չեն, դրանք համապատասխանում են գործնական և խաղային մեթոդներին:

## ԳԼՈՒԽ 2

### ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ես պարապմունքն իրականացրեցի տարատարիք խմբում, կարևորելով տարրական գիտելիքները նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Իմ պարապմունքի նպատակն էր՝ ամրապնդել երկրաչափական պատկերները ըստ բնորոշ հատկանիշների (չափի, գույնի) տարբերակելու և դասակարգելու շրջապատում

տարբեր երկրաչափական պատկերներ հայտնաբերելու և համեմատելու կարողությունը: Սովորեցնել տարբերել երկրաչափական պատկերները: Չարգացնել տեսողական հիշողությունը, լսելու կարողությունը: Երեխաները պետք է հստակ պատկերացում ունենան բոլոր երկրաչափական պատկերներին բնորոշ հատկանիշների՝ անկյունների, կողմերի առկայության, դրանց քանակի, կողմերի չափերի համադրման մասին, կարողանան հաջորդաբար ընտրել և համեմատել պատկերների միանման հատկանիշները (շրջան, ձվածիր), անվանել պատկերներն ըստ բանավոր նկարագրման: Սովորեցնել գտնել, ընտրել և խմբավորել դրանք՝ միաժամանակ հաշվի առնելով մի քանի հատկանիշներ՝ պատկերի ձևը, չափը, գույնը, քանակը: Պարապմունքը վարել եմ մեթոդիստի հետ:

### ԳԼՈՒԽ 3

#### ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ամրապնդել երկրաչափական պատկերները ըստ բնորոշ հատկանիշների (չափի, գույնի) տարբերակելու և դասակարգելու, շրջապատում տարբեր երկրաչափական պատկերներ հայտնաբերելու և համեմատելու կարողությանը:

.Սովորեցնել համեմատել քառակուսու կողմերի երկարությունը՝ թուղթը հավասարաչափ ծալելու կամ չափանմուշներով չափելու միջոցով

.Սովորեցնել տարբերել նոր երկրաչափական պատկերը և անվանել այն ձվածիր (օվալ):

.Հիշեցնել առարկաների երկու քանակային խմբերի համեմատման միջոցով հավասարություն և անհավասարություն հաստատելու եղանակները՝ փոքր խմբին ավելացնելով պակասող առարկան կամ մեծ խմբից հեռացնելով ավելորդը:

.Չարգացնելով տեսողական հիշողությունը, լսելու կարողությունը:

.Դաստիարակել ինքնուրույնություն, ուսումնական խնդիրը հասականալու կարողություն:

Անհրաժեշտ պարագաներ՝ երկրաչափական տարբեր պատկերներով «հրաշալի պարկ» խաղանիշեր, գնդակ, չափանմուշ, 5-ի սահմանում առարկաների խմբեր: Բաշխիչ կյուբեր՝ թուղթ, մատիտ, անհատական ծրարներ մեջը ձևով գույնով, չափսով տարբեր երկրաչափական պատկերներ:

Խնդիրներ՝

- .Ծանոթացնել երկրաչափական պատկերների հետ
- .Խմբավորել երկրաչափական պատկերները
- .Չարգացնել կամային ուշադրությունը, տեսողական հիշողությունը, գունազգացողությունը:

### Պարապմունքի ընթացքը

Երեխաների սեղաններին դնել ձևով, գույնով, չափով տարբեր երկրաչափական պատկերներով անհատական ծրարներ

- Անվանե՛ք երկրաչափական պատկերները, ինչպիսի՞ն են դրանք , նշեք գույնը, չափը:
- Առանձնացրե՛ք բոլոր շրջանները: Ինչպիսի՞ն են դրանք գույնով, չափով:
- Առանձնացրե՛ք բոլոր կանաչ երկրաչափական պատկերները: Ի՞նչ ձև ունեն, քանի՞սն են դրանք:

-Առանձնացրե՛ք դեղին փոքր պատկերները: Ի՞նչ ձև ունեն:

-Առանձնացրե՛ք քառակուսիները:

-Վերցրե՛ք շրջանն ու քառակուսին համեմատեք, ի՞նչ տարբերություն կա դրանց միջև:

-Առանձնացրե՛ք բոլոր պատկերները, բացի եռանկյուններից: Հաշվե՛ք եռանկյունները՝ քանի՞ եռանկյուն կա յուրաքանչյուրիդ մոտ:

-Ի՞նչ տարբերություն և նմանություն կա քառակուսու և եռանկյան մեջ:

-Որո՞նք են անկյուն ունեցող բոլոր երկրաչափական պատկերները:

-Հավաքե՛ք բոլոր պատկերները և տեղադրեք ծրարների մեջ:

Սսեղծել խաղային իրավիճակ՝ երեխաներին բաժանել 2 խմբի, խմբերին տա՝ անվանումներ՝ «Ուլիկներ» և «Այծիկներ»: Առաջարկել ձեռքերը դնել գոտկատեղին, լսել հրահանգը և կատարել:

Հակառակն արա

.Այծիկները ձեռքերը իջեցնում են ցած, ուլիկները՝ բարձրացնում

.Այծիկները բարձրացնում են աջ ձեռքը, ուլիկները՝ ձախ

.Այծիկները ծափ են ծնկատակում, ուլիկները՝ գլքավերնում

.Այծիկները դոփում են աջ ոտքով, ուլիկները՝ ձախ ոտքով

.Այծիկները բարձր են ցատկում, ուլիկները ցածր են ցատկում:

### Չրույց՝ «Քառակուսու կողմերը»

.Ցույց տալ քառակուսու պատկերը

-Ի՞նչպիսի կողմեր ունի քառակուսին (կողմերը հավասար են)

.Ինչպե՞ս կարելի է համոզվել, որ քառակուսու կողմերը հավասար են

-Ի՞նչ է հարկավոր անել դրա համար (չափել):

Հնարավորություն տալ երեխաներին արտահայտվելու, չչտապեցնել, լսել առաջարկված բոլոր հնարավոր տարբերակները և համեմատման եղանակները:

### Աշխատանք՝ «փայտերի միջոցով քառակուսու կազմում»

Երեխաների սեղաններին դնել հաշվիչ փայտիկներով՝ մեկական չափ:

-Տուփից վերցրե՛ք փայտիկներ և ստացե՛ք քառակուսու պատկերը:

-Ի՞նչ գիտեք քառակուսու մասին (ուևի 4 կողմ, հավասարակողմ է):

-Ինչպե՞ս իմացաք , որ քառակուսու բոլոր կողմերը հավասար են, և բոլոր կողմերի համար օգտագործվեց մեկական փայտիկ:

-Քանի՞ փայտիկի միջոցով ստացաք քառակուսին: Քանդե՞ք փայտիկները, 4 փայտիկը համեմատեք չափով, դրանք շարեք կողք կողքի, ծայրերը հավասարեցնելով:

-Ի՞նչ նկատեցիք (փայտիկները հավասար չափ են, ուրեմն քառակուսու կողմերն էլ են հավասար):

Նորից վերականգնե՛ք քառակուսին:

Ցուցադրել շրջանի և ձվածիր պատկերներով քարտեր՝ երեխաների ուշադրությունը հրավիրելով նրանց միջև առկա նմանության և տարբերության (ձվածիրը նման է շրջանի):

Անվանել շրջանը և ձվածիրը, ընտրել և առանձնացնել միանման պատկերները:

### Խաղ՝ «Կախարդական մատիտները»

Գրատախտակի մոտ հրավիրել երեք երեխայի, կապել նրանց աչքերը և նրանցից յուրաքանչյուրին տալ մի երկրաչափական պատկեր:

Լսելով խաղավարի հրահանգը՝ «պատմի՛ր երկրաչափական պատկերի մասին», երեխաները մատիտներով սկսում են շոշափել պատկերները: Նրանք պատմում են, թե ինչպիսի հատկանիշներ ունեն այդ երկրաչափական պատկերները, խաղը շարունակել մյուս երեխաների հետ:

### Խաղ «Հրաշալի պատկերը»

Երեխաներին առաջարկել նստել դաստիարակի շուրջը: Շրջանի երկու կողմերից նրանց տալ «հրաշալի պատկերը » (երկու պարկ):

Առաջարկել ձեռքը մտցնել պարկի մեջ, շոշափել պատկերը և հայտնել հարևանությամբ նստած ընկերոջը, թե ինչպիսի պատկեր կա ձեռքի մեջ, այնուհետև հանել այն:

Սխալվելու դեպքում պատկերը նորից դնել պարկի մեջ և կրկնել գործողությունը:

Աշխատանք՝ առաջարկել նկարել մեկ մեծ քառակուսի և մեկ մեծ ուղղանկյուն, այնուհետև կտրել:

Սեղանների շուրջը նստած աշխատանք՝

«Վերականգնի՛ր հավասարությունը»

(Քանակային խմբերի համեմատում):

.Քանի՞ շրջան կա կանաչ սեղանի վրա (5): Քանի՞ քառակուսի կա կարմիր սեղանին (4):

-Ինչպե՞ս անենք, որ յուրաքանչյուր խմբում առարկաների քանակը հավասարվի (մեկ քառակուսի ավելացնել կարմիր սեղանին):

Երեխաները համեմատում են առարկաների երկու խմբերը և համոզվում, որ

յուրաքանչյուր խմբում հավասար քանակի են՝ հնգական են:

Երեխաների միտքն ուղղորդել դատողություններ, ենթադրություններ անելու (կարմիր սեղանին ավելացրին մեկ քառակուսի՝ դրանց քանակը երկու խմբում էլ դարձավ հնգական): Ամփոփելով ասել, որ խմբերի առարկաների քանակը կարելի է

հավասարեցնել՝ ավելացնելով կամ պակասեցնելով մեկ առարկա:

.Սովորեցնել շրջապատում հայտնաբերել և համեմատել տարբեր երկրաչափական պատկերներ: Երեխաների հետ միասին քայլել սենյակով գտնել և համեմատել

կենցաղային առարկաները ծանոթ երկրաչափական պատկերների հետ՝ ափսե, սեղան, գրատախտակ:

Երեխաները պետք է հստակ պատկերացում ունենան բոլոր երկրաչափական պատկերներներին բնորոշ հատկանիշների՝ անկյունների, կողմերի առկայության, դրանց քանակի, կողմերի չափերի համադրման մասին, կարողանան հաջորդաբար ընտրել և համեմատել պատկերների միանման հատկանիշները (շրջան, ձվածիր), անվանել պատկերներն ըստ բանավոր նկարագրման:

Սովորեցնել գտնել, ընտրել և խմբավորել դրանք՝ միաժամանակ հաշվի առնելով մի քանի հատկանիշները՝ պատկերի ձևը, չափը, գույնը, քանակը:

### Մեթոդիստի դիտարկումը

.Դաստիարակը երեխաների համար ստեղծել է ապահով, արդյունավետ միջավայր: Իր գործողությունների միջոցով մոդելավորում և երեխաների մեջ զարգացնում է հմտություններ, երեխաների հետ երկխոսություն, համագործակցություն է հաստատում և ստեղծում է փոխընթերցման մթնոլորտ, որի ընթացքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավման միջոցով:

Դաստիարակը հետազոտում է գործունեությունը և համապատասխան եզրահանգումներ է անում, պարզում է երեխաների հետաքրքրությունների շրջանակը և դրան համապատասխան կազմակերպում, ուղղորդում երեխաների գործունեությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Այսպիսով երեխաները կկարողանան անվանել և տարբերել երկրաչափական պատկերները:

2. Կկարողանան խմբավորել ըստ գույների և քանակի:

Այո ես հասա իմ առջև դրված նպատակին, ուսուցումը կազմակերպեցի համագործակցային մթնոլորտում, ուր երեխան և դաստիարակը նույն հարթության վրա են հանդես գալիս: Երեխաների հետ երկխոսություն և համագործակցություն հաստատեցի:

Հարստացնել և ակտիվացնել երեխաների բառապաշարը՝ պարապմունքի թեմայի շրջանակներում:

Գրականության ցանկ  
1. Համացանց  
2. Ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան 2014)